

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԸ

Ինչպես յայտնի է, անցեալները Գնալըի մէջ քանի մը ժամուան համար հիւրասիրուած էր Երուսաղէմի Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, որ Երեսմէն Երուսաղէմ կը վերադառնար: Նորին Ամենապատուութիւնը հետեւեալ շնորհակալութեան նամակը ուղարկած է Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեանին:

Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան
Պատրիարք Թուրքիոյ Հայոց
Իսթանպուլ

Սիրելի Սրբազան Եղբայր,

Կ'ուզեմք մեր շնորհակալութիւնը յայտնել Ձեզի, բոլոր այն կարգադրութեանց համար, զորս հանեցաք կատարել եւ կատարել տալ, թէ 2 Յուլիսին եւ թէ 13 Յուլիսին, Երուսաղէմէն Պոլիս Երեսմ ողանաւային երթեւեկութեան կապակցութեամբ, Ամենայն Հայոց հանգուցեալ Հայրապետին թաղման կարգադրութեան առիթով, երբ միասին պարտաւոր էինք Ս. Էջմիածին գտնուիլ: Տխուր եւ անապարտ եւ միօրեայ անցքը Պոլիսէն լեցուն եղաւ յիշատակելի պահերով, ապրումներով եւ հանդիպումներով:

Հանեցէք մեր եւ Մեւան Սրբազանի գմահատանքի զգացումները յայտնել Պատրիարքարանի, Եշիլգիւղի եւ Գնալը Կղզիի եւ Կազդուրման Կայանի Հոգեւորական եւ Թաղային Խորհուրդի պատասխանատու անդամներուն, մաղթելով որ Աստուած իրենց նուիրեալ եւ եռանդուն գործունէութիւնը աշխուժացնէ: Մասնատրապէս յիշատակելի են Տիկին Թանիա Շիրինեանը եւ իր հայրը՝ Պրմ. Կարայիս Էգմեանը, որոնք ազնուօրէն տրամադրեցին իրենց ընտանեկան նաւը, թէ փոխադրութեան եւ թէ ծովային շրջապտոյտի նպատակով:

Աստուած Ձեզ օգնական լինի, ձեր բոլոր գործոց յաջողութեան մէջ:

23 Յուլիս 1999
Երուսաղէմ

Սիրոյ Ողջունիւ
ԹՈՐԳՈՄ ՊԱՏՐԻԱՐԿ

ՄԱՐՄԱՐԱ